ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1231 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1443-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՐՄԵՆԻԱ ՎԱՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1443-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածի ցանկը 104-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 105-113-րդ կետերով.

«

105.	2918199800	Կարբոնաթթուներ՝ սպիրտային խումբ պարունակող, սակայն այլ թթվածնակիր ֆունկցիոնալ խումբ չպարունակող, դրանց անհիդրիդները, հալոգենանհիդրիդները, պերօքսիդները, պերօքսիթթուները և դրանց ածանցյալները	Կարբոնաթթու (լիմոնաթթու, գինեթթու, խնձորաթթու)	կգ	1 200	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	2 160 000	
106.	3302101000	Ըմպելիքների արդյունաբերական արտադրության համար օգտագործվող պատրաստուկներ, որոնք պարունակում են ըմպելիքները բնութագրող համ և հոտ հաղորդող բոլոր բաղադրիչները՝ 0,5% ծավալային բաժնից ավելի սպիրտի պարունակությամբ:	Արտադրության մեջ օգտագործվող հոտավետ նյութեր	կգ	5 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	55 000 000	

107.	3905999090	Վինիլացետատի կամ այլ բարդ վինիլային եթերների պոլիմերներ՝ սկզբնական ձևերով. վինիլային այլ պոլիմերներ՝ սկզբնական ձևերով	Պոլիվինիլպոլիպի ռոլիդոն՝ գինեկոլոգիայի կայունացման համար նախատեսված	կգ	1 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	4 500 000	
108.	7326909807	Արտադրատեսակներ սև մետաղներից կռած կամ դրոշմած, բայց առանց հետագա մշակման	Մետաղյա խտարարներ	կգ	2 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	10 500 000	
109.	7304410008	Հարթ գլանվածք՝ պատրաստված կոռոզիոն դիմացկուն պողպատից, 600 մմ-ից պակաս լայնությամբ	Պողպատյա գլանվածք 4,75 մմ հաստությամբ կամ ավելի	կգ	50 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	250 000 000	
110.	7306111000	Խողովակներ և այլ սնամեջ պրոֆիլներ (օրինակ՝ բաց կարով կամ եռակցված, գամված կամ միացված նույն ձևով), գունավոր մետաղներից	Խողովակներ եռակցված, պատրաստված կոռոզիակայուն պողպատից	կգ	50 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	200 000 000	

111.	7010909101	Ապակյա անգույն շիշ	Ապակյա թափանցիկ շիշ գինի շշալցնելու համար	հատ	500 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	350 000 000	
112.	7010904700	Ապակյա անգույն շիշ	Ապակե տարաներ՝ անգույն ապա-կուց՝ 0,15 լ-ից պակաս անվանական տարողությամբ	հատ	500 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	400 000 000	
113.	4504902000	Կոնյակի խցան	Խցաններ պատրաստված ագլոմերացված խցաններից (կապակցիչով կամ առանց)	հատ	50 000	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ	50 000 000	

».

2) հավելվածի ցանկի «Ընդամենը» պարբերությունում «8 840 088 776» թիվը փոխարինել «10 162 248 776» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

08.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ